կան հրամանը. երբեք տեսնուած չէր որ վանքերու նորոգութեան ծախքը հոգացուէր արքունիքէն, որուն համար ան կը պարծենար. և այս կերպով բդեշխը Հայոց աղաչանքները չլսելով՝ մեծ վնասներու ենթարկած է զանոնք. թէ նոյն եկեղեցին Հայոց սեպհական է և այլն։ Քննիչներու գիրերը Բ. Դրան մատուցուեցան. Զաքարիա պատրիարքն ալ հին վաւերական գիրերու պատճենները դատաւորին իլամին հետ ղրկեց Կ. Պոլիս. Մատթէոս պատրիարքն ալ իր գրովը ղրկեց Մեծ Եպարքոսին։ Նոյն ատենները պաշտօնակ եղան բդեշխը և Սիւրիոյ կուսակալը։ Եպարքոսը ղրկուած գիրերը յղեց Մուղթազային՝ արձանագրութիւնները վերըստին հետազօտելու համար. գտնուեցան երկու հրովարտակներ՝ տրուած Հայոց և Յունաց հիճրէթի 1228ին, որոնց մէջ յիշատակուած էր Ս. Յովհաննէս եկեղեցին. իսկ հիճրէթի 1257ին Ս. Յարութեան և Բեթղեհէմի եկեղեցիին նորոգութեան համար տրուած հրովարտակին մէջ Ս. Յովհաննէս եկեղեցւոյ մասին բառ մը անգամ չգտնուեցաւ. բայց Յոյները անդադար կը յուզէին այս խնդիրը Կ. Պոլսի մէջ, ուստի հարկ եղաւ վերստին հարցում ուղղել Երուսաղէմի նոր բդեշխին՝ լաւ կերպով քննել նոյն եկեղեցին այլազգիներուն, հայ և յոյն միաբաններուն ներկայութեան, և ստուգել թէ արդարև Հայերը իրե՛նք կը նորոգեն իրենց սեպհական տեղերը և իրենց վանքերը, և թէ Յոյները ի՞նչպէս ձեռնամուխ եղան վանօրէից շինութեան և նորոգութեան, առանց բարձրագոյն հրամանի. այդ պատճառաւ վէճը երկարեցաւ եւ խնդիրը առկախ մնաց. և վերջապէս Յոյները թոյլ չտուին Հայոց վերաշինելու իրենց եկեղեցիին տանիքը, և մնաց այնպէս, ինչպէս որ էր (Տե՛ս Ա. եպս. Տ. Յովհաննէսեան, Պատմ. Երուսաղէմի, Բ. Հտր. էջ 528–530)։

Հոս կը դնենք Ս. Յովհաննու Աւետարանչի եկեղեցիին մէջ այլ և այլ թուականներուն գտնուած յիշատակարանները.

Դրան ճակատը.

«Յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք Զուղայեցի Խանանց մէկ. Մարգարին եւ իւր ծնողացն եւ կողակցին եւ որդւոցն եւ ամենայն արեան մերձաւորացն որ օգնութիւն արար տրաւք ողորմութեամբ վասն նորոգութեան Ս. Յովհաննէս Առաքելոյն աւետարանչին Յիսուսի Քրիստոսի. Տէր Աստուած իւրն վարձա-